ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
14.04.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՈՒՐԱՐՏՈՒ» ՄԱՐԶԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՈՒՐԱՐՏՈՒ» ՄԱՐԶԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02565955
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ ՋԻՎԱՆՈՒ Փ. 2
1.4 Պետական գրանցման համարը		211.171.01530
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-01-16
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)98593091
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		info.avesta.n@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԳՈՀԱՐ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	Գլխավոր տնօրեն
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Ֆուտբոլային գործունեություն		
Նպաստել ֆուտբոլի զարգացմանը և մասսակայացմանը Հայաստանի Հանրապետությունում		
Մասնակցել Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլ մարզաձևում կազմակերպվող և անցկացվող սիրողական և/կամ պրոֆեսիոնալ առաջնություններին		
Նպաստել առողջ ապրելակերպին		
Օժանդակել մարզիկների սոցիալական ապահովությանը և առողջության պահպանմանն ու զարգացմանը		
Միջոցներ ձեռնարկել ֆուտբոլիստների սպորտային ռեժիմով սնվելու հնարավորությունը ապահովելու ուղղությամբ		
Կապեր հաստատել ինչպես Հայաստանի Հանապետության, այնպես էլ օտարկերկրյա այլ մարզաղպրոցների և/կամ ֆուտբոլային ակումբների հետ		
Կազմապերպել սիրողական ֆուտբոլի առաջնություններ		
Միջոցներ ձեռնարկել ֆուտբոլ մարզաձևի Հայաստանի Ազգային Հավաքականի համար սաներ նախապատրաստելու ուղղությամբ		
Նպաստել երեխաների ֆուտբոլային կրթության մակարդակի բարձրացմանը		
Նպաստել մարզչական գործունեության մասնագիտական մակարդակի բարձրացմանը		
Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում նպաստել ֆուտբոլով զբաղվող երեխաներին բարեկեցիկ մարզական պայմանների ապահովմանը		
Նպաստել Հայաստանի Հանրապետությունում պրոֆեսիոնալ ֆուտբոլի տեսական և գործնական կառավարման մակարդակի բարելավմանը		
Կազմակերպել և անցկացնել ուսումնամարզական հավաքներ		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		3
4.2 Կամավորների թիվը		0
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		0

6 Իրականացված ծրագրեր՝

6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը

Digitally signed by HAKOBYAN ANUSHAVAN 2212940564
Date: 2023.08.09 16:51:21

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	3,460,034,971
8.2 Գույքը	60,135,262
Ընդամենը	3,520,170,233

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1		
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	0	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	3,627,944,535
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1	Տրանսպորտային միջոցներ	155,422,265
2	Շենքեր և շինություններ	34,200,048
Ընդամենը		3,817,566,848

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		0

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Սպորտային ակումբների գործունեություն	11,124,800	Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը
2	Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ	1,359,050	Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը
Ընդամենը		12,483,850	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____33_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Ֆուտբոլային Ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

Երևան – 2023

«Ֆուտբոլային Ակումբ Ուրարտու»
Մարզական Հասարակական Կազմակերպություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399 855, (+374 55) 560 550

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու»
Մարզական հասարակական կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆուտբոլային Ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Կազմակերպության 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի ապրիլի 13-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք

բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ» «G & CO AUDIT GROUP» 00128776 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA YEREVAN LIMITED LIABILITY COMPANY

Աուդիտոր Ա. Չատինյան

«12» ապրիլի 2023թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

առ 31-ը դեկտեմբերի 2022թ-ի դրությամբ

	ԾՆԹ.	31.12.2022	31.12.2021 վերաներ-կայացված
		հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	*250,559*	*418,469*
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով		-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	*20,136*	*2,440*
Ընթացիկ հարկային ակտիվներ	9	*275*	*105*
Պաշարներ	10	*8,959*	*11,632*
Այլ ընթացիկ ակտիվներ		-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		279,929	432,646
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	*678,581*	*760,644*
Ոչ նյութական ակտիվներ՝ ֆուտբոլիստներ	12	*10,100*	*22,533*
Այլ Ոչ նյութական ակտիվներ	12	*1,249*	-
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով		-	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	13	*5,040*	*14,281*
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
Ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*694,970*	*797,458*
Ընդամենը ակտիվներ		974,899	1,230,104
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտներ և այլ վարկեր		-	-
Կրեդիտորական պարտքեր խմբին և կապակցված կողմերին	14	*45,142*	*19,372*
Կրեդիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքր աշխատավարձի և այլ հատուցումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		*1,559*	*1,890*
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծ	9	*8,395*	*7,902*
Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ	15	*24,559*	*168,049*
Այլ կրեդիտորական պարտքեր	16	*13,752*	*10,227*
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ	17	*3,020*	*30*
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	18	*-174,739*	*220,943*
Ընթացիկ պահուստներ	19	*8,764*	*9,418*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		279,930	437,831

10-ից 31-ը էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

առ 31-ը դեկտեմբերի 2022թ.-ի դրությամբ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

	ԾՆԹ.	31.12.2022	31.12.2021 վերաներ-կայացված
		հազ. դրամ	հազ. դրամ
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային և այլ վարկեր		-	-
Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքը աշխատավարձի և այլ հատուցումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		-	-
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	18	*694,969*	*797,458*
Երկարաժամկետ պահուստներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		694,969	797,458
Զուտ ակտիվներ			
Կանոնադրական կապիտալ		-	-
Չբաշխված շահույթ		-	*(5,185)*
Պահուստային կապիտալ		-	-
Ընդամենը Զուտ ակտիվներ		-	(5,185)
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		974,899	1,230,104

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Գոհար Վարդանյան

Ֆինանսական հարցերով պատասխանատու
Նարինե Հակոբյան

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾՆԹ.	2022թ.	2021թ. վերաներ-կայացված
		հազ. դրամ	հազ. դրամ
Հասույթ՝			
-Տոմսերի իրացում		1,827	216
-Հովանավորչություն և գովազդ		-	-
-Հեռարձակման իրավունքներ		-	1,169
-Առևտրական		9,562	14,925
-ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ	20	64,261	142,300
-Այլ գործառնական եկամուտ (նվիրատվությունների եկամուտ ճանաչված մաս և մարզումային փոխհատուցումներ)	20	834,722	842,356
Ընդամենը Հասույթ		**910,372**	**1,000,966**
Ծախսեր՝			
-Մատուցված ծառայության ինքնարժեք		-	-
-Աշխատավարձի գծով ծախսեր՝ ֆուտբոլիստներին	21	(210,905)	(186,587)
-Աշխատավարձի գծով ծախսեր՝ այլ աշխատակիցներին	21	(163,062)	(264,159)
-Հիմնական միջոցների մաշվածության և սպասարկման ծախսեր		(142,199)	(131,842)
-Ոչ նյութական ակտիվների՝ համակարգչային ծրագրերի ամորտիզացիա(բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		(251)	-
-Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Այլ գործառնական ծախսեր՝			-
-ֆուտբոլային ծախսեր	22	(290,551)	(306,502)
-վարչական ծախսեր	22	(89,961)	(76,123)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		**(896,929)**	**(965,213)**
Գործառնական շահույթ (վնաս)		**13,443**	**35,753**

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

	ԾՆԹ.	2022	2021 վերաներ-կայացված
		հազ. դրամ	հազ. դրամ
Ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերում և օտարում՝			
-Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (ֆուտբոլիստների գրանցում)		(12,433)	(10,680)
-Ոչ նյութական ակտիվների արժեզրկում (ֆուտբոլիստների գրանցում)		-	-
-Գրանցումների օտարումից շահույթ		-	-
-Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործակալներին կամ միջնորդներին և ֆուտբոլիստների վարձակալության վճարներ)		(995)	(2,907)
-ֆուտբոլիստների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտ)		-	-
Ընդամենը ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերում և օտարում		**(13,428)**	**(13,587)**
Ոչ ընթացիկ ակտիվների օտարման արդյունք			
-Հիմնական միջոցների օտարումից օգուտ (վնաս)		-	-
-Ոչ նյութկան ակտիվների օտարումից օգուտ (վնաս)		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ (վնաս)		-	-
Ֆինանսական եկամուտ (ծախս) և փոխարժեքային տարբերություններ			
-Ֆինանսական եկամուտներ		1,089	1,580
-Ֆինանսական ծախսեր		-	-
-Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	23	14,403	(10,526)
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախս) և փոխարժեքային տարբերություններ		**15,492**	**(8,946)**
Այլ ոչ գործառնական գործունեություն			
-Այլ եկամուտներ (ոչ գործառնական)		-	-
-Այլ ծախսեր (ոչ գործառնական)		(8,763)	(16,515)
Այլ ոչ գործառնական գործունեության արդյունք		**(8,763)**	**(16,515)**
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**6,744**	**(3,295)**
Շահութահարկի գծով ծախս		(1,559)	(1,890)
Տարվա զուտ շահույթ (վնաս)		**5,185**	**(5,185)**

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Գոհար Վարդանյան

Ֆինանսական հարցերով պատասխանատու
Նարինե Հակոբյան

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարիվա համար

		հազ. դրամ
	Կուտակված հավելաճ (Չծածկված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2020թ.	-	-
Տարվա վնաս	(5,185)	(5,185)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ.	**(5,185)**	**(5,185)**
Տարվա հավելաճ	5,185	5,185
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	-	-

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Գոհար Վարդանյան

Ֆինանսական հարցերով պատասխանատու
Նարինե Հակոբյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2022-31.12.2022	01.01.2021-31.12.2021
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	հազ. դրամ	հազ. դրամ
Մուտքեր տոմսերի իրացումից	1,827	216
Մուտքեր հովանավորչությունից և գովազդից	-	-
Մուտքեր հեռարձակման իրավունքից	-	-
Մուտքեր առևտրային գործունեությունից	19,866	14,754
Այլ մուտքեր՝	-	
Նվիրատվություններ	715,726	673,430
Մարզումային փոխհատուցումներ	9,905	5,185
Այլ	12,875	9,048
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից	**760,199**	**702,633**
Վճարումներ ձեռքբերված ծառայությունների և ապրանքների դիմաց	(389,919)	(433,973)
Վճարումներ աշխատակիցներին և հօգուտ նրանց	(379,263)	(350,340)
Վճարումներ գործակալներին ու միջնորդներին	-	
Վճարումներ այլ գործառնական ծախսերի դիմաց	(19,172)	(122,480)
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից	**(788,354)**	**(906,793)**
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(28,155)**	**(204,160)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Դրամական միջոցների մուտքեր ֆուտբոլիստների գրանցման օտարումից	-	-
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից	838	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից	-	105,000
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից	**838**	**105,000**
Վճարումներ ֆուտբոլիստների գրանցումներ ձեռքբերելու համար	-	-
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման համար	(14,920)	(71,966)
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից	-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից	**(14,920)**	**(71,966)**
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(14,082)**	**33,034**

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

	01.01.2022-31.12.2022	01.01.2021-31.12.2021
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	հազ. դրամ	հազ. դրամ
Փոխկապակցված կողմերից ստացված փոխառություններ	424,879	705,921
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	-	-
Մուտքեր կանոնադիր կապիտալի ներդրումից	-	-
Մուտքեր պարտատոմսերի թողարկումից	-	-
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից	1,089	1,580
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից	**425,968**	**707,501**
Փոխառությունների մարում կապակցված կողմերին	(515,194)	(633,469)
Վարկերի և փոխառությունների մարում Ֆինանսական կազմակերպություններին	-	-
Կանոնադիր կապիտալի նվազեցում և շահաբաժնի վճարում	-	-
Պարտատոմսերի մարում	-	-
Տոկոսների վճարում	-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից	-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից	**(515,194)**	**(633,469)**
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(89,226)**	**74,032**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**(131,463)**	**(97,094)**
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	**(36,447)**	**(23,212)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**418,469**	**538,775**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները *ժամանակաշրջանի վերջի դրությամբ*	**250,559**	**418,469**

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Գոհար Վարդանյան

Ֆինանսական հարցերով պատասխանատու
Նարինե Հակոբյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպություն

առ 31-ը դեկտեմբերի 2022թ.-ի դրությամբ

1. Ընդհանուր տեղեկություններ

«Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» Մարզական Հասարակական Կազմակերպությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2003թ. հունվարի 16-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Կազմակերպությունը ղեկավարվում է «հասարակական կազմակերպությունների մասին օրենք» ՀՀ օրենքով նախատեսված գործադիր մարմնի՝ խորհրդի և նախագահի կողմից:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ջիվանու 2:

Կազմակերպության աշխատողների միջին ցուցակային թիվը 2022թ.-ին կազմել է 176 մարդ (2021թ՝ 146 մարդ):

Կազմակերպության բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը խորհուրդն է, որը բաղկացած է հետևյալ անդամներից.

Ջեվան Չելոյանց	խորհրդի նախագահ
Գոհար Վարդանյան	անդամ
Կարինէ Չելոյանց	անդամ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Այնուամենայնիվ՝ 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19), որը 2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը դասակարգեց որպես համավարակ, իր էական ազդեցություն է ունեցել ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացրել են մի շարք միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ ակտիվ փուլում է գտնվում Ռուս-Ուկրաինական հակամարտությունը: Արդեն պարզ է, որայն մեծ ազդեցություն կունենա ոչ միայն տարածաշրջանի այլ ամբողջ աշխարհի վրա: Այն չի շրջանցի նաև Հայաստանը: Ռուսաստանի Դաշնության նկատմամբ միջազգային պատժամիջոցներն ու սահմանափակումները կարող են պատճառ հանդիսանալ ՀՀ-ու գործող կազմակերպության գործունեության խաթարման համար, եթե նրա բաժնետերերի, մասնակիցների, կամ գործընկերների նկատմամբ կիրառվեն այդ պատժամիջոցները:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն, իսկ դրա անցման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 5-ում:

Կազմակերպությունը ՖՀՄՍ-ից անցում է կատարել ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1209-Ն որոշմամբ հաստատված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված 2020թ հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթներով:

Ներկայումս ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն ի ընդհանուր սկզբունքների վրա:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Կազմակերպության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

5. Համադրելիությունը և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացվում են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերվող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա

ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2-ում Կազմակերպությունը ՖՀՄՍ-ներից անցում է կատարել ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին և անցման ժամանակ վերահաշվարկել է համադրելի տեղեկատվությունը: Վերահաշվարկման արդյունքները ներկայացված են ստորև.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱԿՏԻՎՆԵՐ	Վերաներկայացված 31/12/2021 հազ. դրամ	31/12/2021 հազ. դրամ	Տարբերություն հազ. դրամ
Այլ ոչ նյութական ակտիվներ	-	*414,741*	*414,741*
Ընդամենը ակտիվներ	-	**414,741**	**414,741**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Այլ կրեդիտորական պարտքեր	-	*47,735*	*47,735*
Կրեդիտորական պարտքեր խմբին և կապակցված կողմերին	*29,600*	-	*(29,600)*
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	-	*391,421*	*391,421*
Չբաշխված շահույթ	*(5,185)*	-	*5,185*
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ	**24,415**	**439,156**	**414,741**

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

ԱԿՏԻՎՆԵՐ	Վերաներկայացված 31/12/2021 հազ. դրամ	31/12/2021 հազ. դրամ	Տարբերություն հազ. դրամ
Հասույթ՝			
-Այլ գործառնական եկամուտ (նվիրատվությունների եկամուտ ճանաչված մաս և մարզումային փոխհատուցումներ)	*842,356*	*862,982*	*(20,626)*
Այլ գործառնական ծախսեր՝			
-ֆուտբոլային ծախսեր	*(306,503)*	*(287,474)*	*(19,029)*
Ֆինանսական եկամուտ (ծախս) և փոխարժեքային տարբերություններ՝			
-Ֆինանսական ծախսեր	-	*(44,066)*	*44,066*
Այլ ոչ գործառնական գործունեություն			
-Այլ ծախսեր (ոչ գործառնական)	*(16,515)*	*(6,919)*	*(9,596)*
Ընդամենը	**519,338**	**524,523**	**(5,185)**

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

6.1. Չափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

6.2. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Կազմակերպությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

6.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր) ճանաչում է առանձին ակտիվ այն դեպքում, երբ՝ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Կազմակերպություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին չափում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ կանխիկ գնի համարժեքն է: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից հետաձգվում է, սկզբնական արժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով) հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում Կազմակերպության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը, ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, տեխնիկական հնացածությունը և հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Շենքեր, շինություններ	20 տարի
Կառուցվածքներ	5-20 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-8 տարի
Սարքավորումներ	5-10 տարի
Սպորտային և տնտեսական գույք	5-10 տարի
Այլ ՀՄ	5-10 տարի

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հետագա ծախսումները

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

6.4. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

Տրանսֆերային և ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերմանն ուղղված այլ բնորոշ ծախսերը կապիտալացվում են որպես ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ: Այս ծախսերը տարեկան հավասար մասնաբաժիններով ամորտիզացվում են ֆուտբոլիստի պայմանագրային ժամկետին զուգընթաց: Մանկապատանեկան թիմերից փոծադրվող խաղացողներին առնչվող ծախսերը կապիտալացման ենթակա չեն:

Եթե պայմանագրի ժամկետը վերանայվում է, չամորտիզացված գումարը, ինչպես նաև պայմանագրային ժամկետի երկարաձգման առնչությամբ ծագած նոր ծախսերը, ամորտիզացվում են համաձայն նոր պայմանագրի:

Ցանկացած տրանսֆերային վճար, որի իրականացումը պայմանավորված է մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի արդյունքից, կապիտալացվում է, երբ հավանական է, որ այդ իրադարձությունը տեղի կունենա:

Ֆուտբոլիստների գրանցումներն արժեզրկման արդյունքում դուրս են գրվում, երբ դրանց հաշվեկշռային արժեքը գերազանցում է վաճառքի կամ օգտագործման փոխհատուցվող գումարը:

6.5. Ակտիվների արժեզրկում

Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Կազմակերպությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Կազմակերպությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն

այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

6.6. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում:

6.7. Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

6.8. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչում

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ

Կազմակերպությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները. չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով և չափվում են ամորտիզացված արժեքով: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է ակտիվների պորտֆելի կառավարման համար Կազմակերպության բիզնես մոդելից, և ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ

Կազմակերպությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Կազմակերպությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ.

(ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ

(բ) Կազմակերպությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ

(գ) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ

(դ) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Տրված փոխառություններ

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված երկարաժամկետ փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է ֆիանսական արդյունքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկղում և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներն են: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի:

6.9. Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Կազմակերպությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորությունների չափման խմբեր

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների, և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի և վարկերի տրամադրման պարտավորությունների:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը

զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է ֆինանսական արդյունքում: Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

6.10. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությանը մատուցել է ծառայություն, Կազմակերպությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Կազմակերպությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով պահանջվում կամ թույլատրվում են հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Կազմակերպությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ տարեկան արձակուրդը) այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը) այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

6.11. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) այն դրույքն է (կամ դրույքները), որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական

գնահատումները: Ձեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

6.12. Շնորհներ

Պետական շնորհները Կազմակերպության ռեսուրսների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն են՝ գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Դրանք չեն ներառում պետական օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խելամտորեն որևէ արժեք վերագրել, ինչպես նաև պետության հետ գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել Կազմակերպության սովորական առևտրային գործարքներից: Այս իմաստով պետությունը ներառում է պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները, հասարակական և այլ նմանատիպ կազմակերպություններ, ներառյալ ոչ պետական բարեգործական կազմակերպությունները:

Շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ.

ա) շնորհը, որը Կազմակերպության համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են: Դրանք ներկայացվում են այլ եկամուտների կազմում.

բ) շնորհը, որը Կազմակերպության համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան եկամտի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն: Ընդ որում, եթե կից պայմանների բավարարումը նախատեսված է հաշվետու ամսաթվից ավելի քան տասներկու ամիս հետո, ապա շնորհները ներկայացավում են ոչ ընթացիկ պարտավորությունների, իսկ հակառակ դեպքում՝ ընթացիկ պարտավորությունների կազմում:

Կազմակերպությունը շնորհները չափում է ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

6.13. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը.

Արտարժույթ	31.12.2022	31.12.2021
1 ԱՄՆ դոլար	393.57 ՀՀ դրամ	480.14 ՀՀ դրամ
1 եվրո	420.06 ՀՀ դրամ	641.11 ՀՀ դրամ

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական

հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6.14. Սխալներ

Կազմակերպությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների և պարտավորությունների սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

6.15. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով տարվա ֆինանսական արդյունքում՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

6.16. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Կազմակերպությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Կազմակերպությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ: Երբ Կազմակերպության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Կազմակերպությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած:

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2022	31.12.2021
Դրամարկղ	14,065	47,713
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	159	11,976
Բանկային հաշիվներ՝ Արտարժույթով	236,335	358,780
Ընդամենը	**250,559**	**418,469**

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2021
Դեբիտորական պարտքեր իրացումների գծով	-	171
Տրված ընթացիկ կանխավճարներ	19,759	2,269
Այլ դեբիտորական պարտքեր	377	-
Ընդամենը	**20,136**	**2,440**

9 Ընթացիկ հարկային ակտիվներ և հարկերի ու պարտադիր վճարների գծով պարտավորություններ

	31.12.2022		31.12.2021	
	Գերավճար	*Պարտք*	*Գերավճար*	*Պարտք*
Միասնական հաշիվ	275	-	105	-
Եկամտային հարկ	-	6,411	-	6,432
Սոցիալական վճար	-	1,216	-	840
Դրոշմանիշային վճար	-	768	-	605
Այլ հարկեր և պարտադիր վճարներ	-	-	-	25
Ընդամենը	**275**	**8,395**	**105**	**7,902**

10 Պաշարներ

	31.12.2022	31.12.2021
Նյութեր	84	182
Սպորտային պարագաներ և դեղորայք	8,875	11,450
Ընդամենը	**8,959**	**11,632**

11 Հիմնական միջոցներ

	Շենքեր և շինություններ	Կառուցվածք-ներ	Տրանսպոր-տային միջոցներ	Սարքա-վորումներ	Սպորտային և տնտեսական գույք	Վարձակալած գույքի բարելավում	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Առ 01.01.2022թ.	68,418	25,193	302,577	329,627	183,990	659,257	76,469	1,645,531
Գնում/կապիտալացում	-	-	-	3,870	6,036	42,824	7,406	60,136
Օտարում	-	-	-	-	-	-	-	-
Առ 31.12. 2022թ.	68,418	25,193	302,577	333,497	190,026	702,081	83,875	1,705,667
Մաշվածություն								
Առ 01.01.2022թ.	(30,798)	(14,594)	(203,350)	(214,492)	(168,780)	(217,972)	(34,901)	(884,887)
Հաշվարկ	(3,421)	(1,659)	(31,775)	(31,035)	(3,850)	(63,009)	(7,450)	(142,199)
Օտարում	-	-	-	-	-	-	-	-
Առ 31.12.2022թ.	(34,219)	(16,253)	(235,125)	(245,527)	(172,630)	(280,981)	(42,351)	(1,027,086)
Հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2021թ.	37,620	10,599	99,227	115,135	15,210	441,285	41,568	760,644
Առ 31.12.2022թ.	34,199	8,940	67,452	87,970	17,396	421,100	41,524	678,581

31.12.2022թ.-ի դրությամբ 486,113 հազ. դրամ սկզբնական արժեքով 1847 անուն (31.12.2021թ.ի դրությամբ 452,120 հազ. դրամ սկզբնական արժեքով 1817 անուն) հիմնական միջոցներ հաշվառվել են զրո հաշվեկշռային արժեքով:

Կազմակերպությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

12 Ոչ նյութական ակտիվներ

	Ֆուտբոլիստների գրանցումներ	Համակարգչային ծրագրեր և ինտերնետային կայք	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 01.01.2022թ.	36,933	398	37,331
Գնում/ կապիտալացում	-	1,500	1,500
Օտարում/դուրսգրում	-	-	-
Առ 31.12. 2022թ.	36,933	1,898	38,831
Մաշվածություն			
Առ 01.01.2022թ.	(14,400)	(398)	(14,798)
Հաշվարկ	(12,433)	(251)	(12,684)
Օտարում	-		-
Առ 31.12.2022թ.	(26,833)	(649)	(27,482)
Հաշվեկշռային արժեք			
Առ 31.12.2021թ.	22,533	-	22,533
Առ 31.12.2022թ.	10,100	1,249	11,349

13 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

	31.12.2022	31.12.2021
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ ձեռքբերելու համար	317	8,519
Տրված կանխավճարներ ոչ նյութական ակտիվներ ձեռքբերելու համար	4,723	5,762
Ընդամենը	5,040	14,281

14 Կրեդիտորական պարտքեր խմբին և կապակցված կողմերին

	31.12.2022	31.12.2021
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	45,142	19,372
Ընդամենը	45,142	19,372

15 Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ

	31.12.2022	31.12.2021
Կարճաժամկետ փոխառություններ	24,559	168,049
Ընդամենը	24,559	168,049

Փոխառությունները ստացվել են կապակցված կողմերից մինչև 12 ամիս մարման ժամկետով, անտոկոս են և ապահովված չեն գրավով:

Կազմակերպության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

16 Այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2021
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	13,752	10,227
Ընդամենը	**13,752**	**10,227**

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 14 օր (2021թ. 15 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Կազմակերպությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Կազմակերպության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

17 Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ

	31.12.2022	31.12.2021
Ստացված կանխավճարներ ծառայությունների մատուցման գծով	2,184	30
Ստացված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների օտարման գծով	836	-
Ընդամենը	**3,020**	**30**

18 Շնորհներ

18.1 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Ստորև ներկայացված են 2021 և 2022թթ. Եկամուտներին վերաբերող շնորհների շարժը և տարեվերջյան մնացորդները:

	31.12.2022	31.12.2021
Մնացորդը տարեսկզբին	**220,943**	**397,575**
Ստացված շնորհներ	643,721	520,582
Շնորհի վերադասակարգում	(59,893)	(94,236)
Եկամուտ ճանաչված շնորհներ	(630,032)	(602,978)
Մնացորդը տարեվերջին	**174,739**	**220,943**

2021 և 2022 թվականների ընթացքում ստացված եկամոտներին վերաբերող շնորհներն են.

	31.12.2022		31.12.2021	
Շնորհատուի անունը և շնորհի արժույթը	***գումարը արժույթով***	***գումարը հազ. դրամ***	***գումարը արժույթով***	***գումարը հազ. դրամ***
Ջեվան Չելոյանց				
ՀՀ դրամ	-	-	1,051,250	-
ԱՄՆ դոլլար	1,541,920	641,963	1,051,250	519,130
Ապրանքներ	-	1,000	-	-
Այլ կողմեր				
Ապրանքներ	-	758	-	1,452
Ընդամենը		**643,721**		**520,582**

18.2 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ստորև ներկայացված են 2021 և 2022թթ. Ակտիվներին վերաբերող շնորհների շարժը և տարեվերջյան մնացորդները:

	31.12.2022	31.12.2021
Մնացորդը տարեսկզբին	**797,458**	**825,206**
Ստացված շնորհներ	-	-
Շնորհի վերադասակարգում	61,825	94,236
Եկամուտ ճանաչված շնորհներ	(164,314)	(121,984)
Մնացորդը տարեվերջին	**694,969**	**797,458**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ստացված շնորհների մնացորդների գծով առկա են կցված և դեռևս չկատարված պայմաններ, որոնք պետք է կատարվեն 12 ամսից ավելի ժամանակահատվածում:

19 Ընթացիկ պահուստներ

	31.12.2022	31.12.2021
Վաստակած արձակուրդների գծով	8,764	9,418
Ընդամենը	**8,764**	**9,418**

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով կարճաժամկետ հատուցումները արձակուրդների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս: Ձեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

20 Հասույթ

	2022	2021
ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ		
Եվրոլիգայի խաղերի մասնակցության մրցանակային գումարներ և համերաշխության վճարներ	-	142,300
ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի համերաշխության գումարներ	44,034	-
Ազգերի լիգայի խաղերի մասնակցության մրցանակային գումարներ և համերաշխության վճարներ	14,368	-
ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների լիգայի Համերաշխության գումարներ	5,859	-
Ընդամենը	**64,261**	**142,300**

	2022	2021
Այլ գործառնական եկամուտներ		
Նվիրատվություններ կապակցված կողմերից	794,345	819,197
Մրցանակային գումարներ ՀՖԴ-ից	9,500	12,000
Այլ	30,877	11,159
Ընդամենը	**834,722**	**842,356**

21 Աշխատակիցների վարձատրության ծախսեր

	2022	2021
Ֆուտբոլիստներ		
Աշխատավարձ	154,616	72,186
Աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ	-	78,617
Հարկային և սոցապ հատկացումներ	56,289	35,784
Ընդամենը	**210,905**	**186,587**

	2022	2021
Այլ աշխատակիցներ		
Աշխատավարձ	119,484	264,159
Հարկային և սոցապ հատկացումներ	43,578	-
Ընդամենը	**163,062**	**264,159**

22 Այլ գործառնական ծախսեր

	2022	2021
Ֆուտբոլային ծախսեր		
Ուսումնամարզական հավաքներ և խաղերի կազմակերպման ծախսեր	103,146	90,961
Մարզադաշտերի սպասարկման ծախսեր	6,677	29,577
Սպորտային պարագաներ	28,659	23,995
Ֆուտբոլիստներին սննդի տրամադրում	20,460	20,781
Անձնակազմի վերապատրաստման ծախսեր	113	4,900
Վճարներ ՀՖՖ-ին	10,135	8,208
Բուժօգնություն ֆուտբոլիստներին	21,639	23,831
Խաղերի վերլուծության, սկաուտական և սելեկցիոն ծառայություններ	15,424	41,119
Ֆուտբոլային դաշտերի վարձակալություն	80,404	55,800
Ֆինանսական օգնություն անապահով ֆուտբոլիստներին	3,894	7,330
Ընդամենը	**290,551**	**306,502**

	2022	2021
Վարչական ծախսեր		
Հիմնական միջոցների սպասարկման և նորոգման ծախսեր	1,329	2,446
Տրանսպորտային ծախսեր	6,000	8,870
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	14,165	5,962
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	206	53
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	47,349	42,583
Աուդիտ և խորհրդատվական ծախսեր	8,410	10,190
Բանկային և ապահովագրական ծախսեր	3,620	1,476
Չփոխհատուցվող հարկեր	3,202	2,125
Այլ ծախսեր	5,680	2,418
Ընդամենը	**89,961**	**76,123**

23 Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)

	2022	2021
Դեբիտորական պարտքերի գծով	(29)	16
Փոխառությունների գծով	53,176	14,095
Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով	(2,297)	(1,425)
Դրամական միջոցների գծով	(36,447)	(23,212)
Ընդամենը	**14,403**	**(10,526)**

24 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

	31.12.2022	31.12.2021
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	377	171
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	250,559	418,469
Ընդամենը	**272,195**	**420,909**

Ֆինանսական պարտավորություններ

	31.12.2022	31.12.2021
Ստացված փոխառություններ	24,559	168,049
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	60,394	29,600
Ընդամենը	**84,953**	**197,649**

25 Կապակցված կողմեր

Կազմակերպության կապակցված կողմեր են հանդիսանում խորհրդի անդամները, հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նաև նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

24.1 Վերահսկողություն

Կազմակերպությունը վերահսկվում է ընդհանուր ժողովի, նախագահի և խորհրդի անդամների կողմից:

24.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ	2022	2021
Ստացված նվիրատվություն	642,962	519,130
Ստացված վարձակալություն	80,400	55,800

Ստացված փոխառություն	424,879	705,921
Ստացված փոխառության մարում	(515,193)	(633,469)
	633,048	**647,382**

Մնացորդներ	**2022**	**2021**
Կրեդիտորական պարտք վարձակալության գծով	45,142	19,372
Ստացված փոխառություն	24,559	168,049
	69,701	**187,421**

Տրամադրված փոխառությունները անտոկոս են, 1 տարուց պակաս ժամկետով և ապահովված չեն գրավով:

25.2 Առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է գլխավոր տնօրենը և ակումբի նախագահը, ինչպես նաև նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

	2022	2021
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ՝ ներառյալ հարկերը	12,386	13,763
Ընդամենը	**12,386**	**13,763**

26 Այլ բացահայտումներ, համաձայն UEFA-ի հատուկ պահանջների

Սույն բացահայտումները լրացուցիչ ներկայացվում են՝ Եվրոպայի Լիգայի պահանջներին համապատասխան:

- 2023թ.-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի տրանսֆերների գծով ժամկետանց պարտքեր, որոնք վերաբերվում են 2022թ.-ին:
- 2023թ.-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի ժամկետանց պարտքեր աշխատակիցներին, չվճարված աշխատավարձերի և այլ հատուցումների գծով, որոնք վերաբերվում են 2022թ.ին:
- 2023թ.-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի ժամկետանց պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով, որոնք վերաբերվում են 2022թ.ին:
- 2023թ.-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի 2022 թ.-ին վերաբերվող ժամկետանց պարտավորություններ այլ ֆուտբոլային ակումբների նկատմամբ:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Կազմակերպությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը, շուկայական ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Կազմակերպությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Կազմակերպությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է

ֆինանսական կորուստներ կրել: Կազմակերպության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից, մասնավորապես՝ բանկերում պահվող դրամական միջոցներից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով

բ) Արտարժութային ռիսկ

Կազմակերպությունը ստանում է արտարժույթով ֆինանսավորում և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Կազմակերպության ենթարկվածությունը.

	31.12.2022			31.12.2021		
	USD	EUR	RUR	USD	EUR	RUR
Ֆինանսական ակտիվներ						
-Դրամական միջոցներ	234,130	9,800	28	362,429	-	-
Ընդամենը	**234,130**	**9,800**	**28**	**362,429**	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
-Փոխառություններ	24,559	-	-	168,049	-	-
-Կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	2,261	-
Ընդամենը	**24,559**	-	-	**168,049**	**2,261**	-
Զուտ արդյունք	209,571	9,800	28	194,380	(2,261)	-

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Կազմակերպության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2021թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2021թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Շահույթ կամ վնաս	20,957	19,438	980	(226)	3	-

գ) Տոկոսադրույքային ռիսկ

Կազմակերպությունը չի ենթարկվում տոկոսադրույքային ռիսկի, քանի՝որ չունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

28 Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Կազմակերպության գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Կազմակերպությանը չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների-կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Գրավադրված ակտիվներ և եկամուտներ

Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի գրավադրված ակտիվներ և եկամուտներ:

ե) Պայմանական պարտավորություններ

Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի տրված - երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

29 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած, ինչպես նաև մինչև աուդիտորական եզրակացությունը ընկած ժամանակահատվածներում:

30 Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2023թ ապրիլի 12-ին:

Գլխավոր տնօրեն
Գոռիկ Վարդանյան

Ֆինանսական հարցերով պատասխանատու
Նարինե Հակոբյան

ՀՖՖ արտոնագրման բաժնի ղեկավար
Վահան Բերակչյանին

«ֆուտբոլային Ակումբ Ուրարտու» ՄՀԿ-ի գլխավոր տնօրեն
Գոհար Վարդանյանից

Հարգելի պարոն Բերակչյան,
Սույնով «ֆուտբոլային Ակումբ Ուրարտու» ՄՀԿ -ն (այսուհետ՝ Ակումբ) հաստատում է հետևյալը՝
ա) ՀՖՖ-ին ներկայացված բոլոր փաստաթղթերը ամբողջական են, ճշգրիտ և համապատասխանում են ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգի (2022թ. խմբ.) դրույթներին.
բ) Արտոնագրման դիմումին կամ արտոնագրային որևէ չափանիշին վերաբերող որևէ էական փոփոխություն կամ նման իրադարձություն տեղի չի ունեցել.
գ) խոշոր տնտեսական նշանակություն ունեցող իրադարձություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոխվել պայմաններ, որոնք կարող են հակադարձ ազդեցություն ունենալ Ակումբի ֆինանսական կարգավիճակի վրա՝ սկսած աուդիտ անցած նախորդ տարեկան հաշվետվությունների օրվանից.
դ) Ակումբը իր պարտատերերից չի փնտրում կամ չի ստացել պաշտպանություն՝ համաձայն օրենքների և կանոնակարգերի, արտոնագրման մրցաշրջանից 12 ամիս առաջ ընկած ժամանակահատվածում:

«ֆուտբոլային Ակումբ Ուրարտու» Մարզական
ՀԿ-ի գլխավոր տնօրեն՝
Գոհար Վարդանյան

(ստորագրություն)